ԱՄՓՈՓՈՒՄ

Դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու համար 2023թ. անցկացված բաց մրցույթի դիտարկման

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից 2022 թվականին իրականացվել է դատախազության ոլորտին առնչվող օրենսդրական կարգավորումների խորքային ուսումնասիրություն և զուգահեռաբար դիտարկվել է նաև պրակտիկայում դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու համար անցկացվող բաց մրցույթը[1]:

Կարևորելով դատախազական համակարգում նոր կադրերի համալրման գործընթացի նկատմամբ հանրային վերահսկողությունն ու թափանցիկությունը՝ կազմակերպությունը 2023թ. ևս իրականացրել է դատախազների թեկնածուների ցուցակը համալրելու նպատակով բաց մրցույթի անցկացման դիտարկում:

Այդ նպատակով դեռևս 2022 թվականի դեկտեմբեր ամսին դիմում է ներկայացվել ՀՀ Գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովին՝ խնդրելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հրավիրված դիտորդի կարգավիճակով դիտարկել մրցույթի գործընթացը: Ստանալով հանձնաժողովի թույլտվությունը՝ կազմակերպությունը մասնակցել է 2023 թվականին դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով կազմակերպված բաց մրցույթին, ինչը սկսվել է 2023 թվականի հունվարի 20-ից:

Ընդհանուր տվյալներ մրցույթի վերաբերյալ

Մրցույթին մասնակցելու հայտերի ընդհանուր թիվը ի սկզբանե եղել է 102: Դիմորդների որակավորման ստուգումը կազմակերպվել է առանձին օրերի՝ շաբաթը

[1] ԻՊԱՍ, Դատախազության համակարգում պաշտոնի նշանակման կարգը, հասանելի է՝ https://prwb.am/wp-content/uploads/2022/05/%D4%B6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81.%D4%B4%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AD%D5%A1%D5%A6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3%D5%B8%D6%82%D5%B4%D5%BA%D5%A1%D5%B7%D5%BF%D5%B8%D5%B6%D5%AB-%D5%B6%D5%B7%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%B4%D5%A1%D5%B6-%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3%D5%A8.pdf

մեկ կամ երկու անգամ հաճախականությամբ, ինչը տևել է մինչև 2023 թվականի մարտի 28-ը։

Ինչպես ցույց է տվել դիտարկումների ընթացքը, մրցույթի յուրաքանչյուր հերթական օրվա ընթացքում այդ օրվա մրցույթին մասնակցող դիմորդների նախատեսված քանակից 2-3 անձ ավելի քիչ է մասնակցել։ Վերջնարդյունքում մրցույթին ընդհանուր առմամբ մասնակցել է դիմած 102-ից 69-ը։ Այսինքն, դիմորդների մեկ երրորդը չի ներկայացել մրցույթին։

Կազմակերպությունը մասնակցել է մինչև 2023 թվականի մարտի 3-ը տեղի ունեցած մրցույթի ստուգումներին և դիտարկել է թվով 47 դիմորդի հարցազրույց, ինչը մրցույթին մասնակցած ընդհանուր դիմորդների 68,12% տոկոսն է կազմում։

Ընդհանուր առմամբ որակավորման քննությունների ավարտին դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկվել է, այսինքն Հանձնաժողովի կողմից դրական եզրակացություն ստացել է 69 թեկնածուից միայն 12-ը։

Կազմակերպության կողմից դիտարկված հարցազրույցների արդյունքները

Կազմակերպության կողմից դիտարկված 47 դիմորդներից 20-ը հանդիսացել են իգական սեռի ներկայացուցիչներ, 27-ը՝ արական սեռի։

Վերոնշյալ 47 դիմորդներից միայն 7-ն է Որակավորման հանձնաժողովի կողմից ստացել դրական եզրակացություն և ներառվել դատախազների թեկնածուների ցուցակում։ Դրական եզրակացություն ստացած դիմորդներից 4-ը հանդիսացել են արական սեռի ներկայացուցիչ, 3-ը՝ համապատասխանաբար իգական սեռի։

Դիտարկված 47 դիմորդ թեկնածուներից 32-ը մրցույթին մասնակցում էր առաջին անգամ, 9 թեկնածու՝ երկրորդ անգամ, մնացած 6-ը երկու անգամից ավելին։ Եղել է դիմորդ, ով դիմել է չորրորդ անգամ և հերթական անգամ կրկին բացասական եզրակացություն է ստացել և չի ներառվել դատախազների թեկնածուների ցուցակում։

Թեկնածուների որակավորման ստուգումը իրականացվել է Գլխավոր դատախազին առընթեր Որակավորման հանձնաժողովի կողմից։

Հանձնաժողովը մրցույթի դիտարկված բոլոր օրերին եղել է իրավազոր և հանդես է եկել 6 անդամից բաղկացած կազմով։ Բոլոր օրերին հանձնաժողովի կազմում եղել են՝

- Արթուր Պողոսյանը՝ Հանձնաժողովի նախագահ, ՀՀ Գլխավոր դատախազի տեղակալ,

- Արտակ Հարությունյան՝ հանձնաժողովի անդամ, ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ,
- Լիլիթ Գրիգորյան՝ Հանձնաժողովի անդամ, Երևան քաղաքի դատախազ,
- Արմեն Մարուխյան՝ Հանձնաժողովի անդամ, ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ,
- Հովհաննես Քոչարյան՝ Հանձնաժողովի անդամ, ՀՀ զինվորական դատախազի տեղակալ:

Մրցույթի առաջին օրերին մասնակցել է նաև Հանձնաժողովի անդամ, Արդարադատության ակադեմիայի ռեկտոր Սերգեյ Առաքելյանը, ով հետագայում մասնակցություն չի ունեցել:

Առանձին օրերի մասնակցել են նաև Տաթևիկ Սուջյանը՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դասախոս և Լիլիթ Պետրոսյանը՝ իրավաբանական գիտությունների թեկնածու:

Որակավորման հանձնաժողովի կազմում ընդգրկված են նաև հետևյալ անդամները, ովքեր դիտարկված օրերին երբեք մրցույթին չեն մասնակցել՝

- Արա Գաբուզյան՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի վարիչ
- Արկադի Սահակյան՝ «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ իրավաբան, ՀՀ ՔԿՀ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի կառավարման խորհրդի անդամ
- Վիտալի Կասկո՝ «Դատախազների միջազգային միության» գործադիր կոմիտեի անդամ, իրավաբանական փորձագետ:

Հարկ է նշել, որ ՀՀ Գլխավոր դատախազության կայքում ամփոփման պահին հասանելի պաշտոնական տեղեկության համաձայն Սերգեյ Առաքելյանի, Տաթևիկ Սուջյանի և Արա Գաբուզյանի մասնակցությունը նախատեսված է ըստ համաձայնության[2]:

[2] ՀՀ Դատախազություն, Որակավորման հանձնաժողովի կազմ, https://www.prosecutor.am/am/%D5%88%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80%D5%B4%D5%A1%D5%B6/

Մրցույթի ընթացքը

Մրցույթի անցկացման ընթացքում յուրաքանչյուր օրվա համար նախատեսված է եղել որակավորմանը մասնակցող դիմորդների կոնկրետ թիվ: Ինչպես ցույց է տվել կազմակերպության դիտարկումը՝ բոլոր օրերին նախատեսված թվով դիմորդներից շատ ավելի քիչ դիմորդ է ներկայացել քննությանը՝ տարբեր պատճառներով: Օրինակ, որակավորման մրցույթի առաջին իսկ օրը հունվարի 20-ին նախատեսված է եղել 9 թեկնածուի մասնակցություն, սակայն քննությանը ներկայացել և մասնակցել է 7 թեկնածու, նմանապես հաջորդող օրերին նախատեսված է եղել 8-ական թեկնածու, սակայն մասնակցել է 5-ը, հաջորդ օրը՝ 6-ը և այդպես շարունակ:

Նման պատկերը թույլ է տվել արձանագրել, որ Որակավորման հանձնաժողովի և մրցույթին ներգրավված այլ մարմինների հատկացրած ջանքերը, ռեսուրսներն ու ժամանակը ավելին են, քան դիմորդների ցուցաբերած հետևողականությունը:

Սա կարևորվում է նաև այն հանգամանքով պայմանավորված, որ դատախազի թեկնածուները իրենց հայտին կցում են «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկ, իսկ հարցազրույցի փուլին հանձնաժողովի կողմից ուսումնասիրվում է նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (հետայսու՝ ԿԿՀ) կողմից տրված բարեվարքության գնահատականը՝ հիմնված այդ հարցաթերթիկի վրա: Այսինքն բարեվարքության գնահատականը անպայմանորեն կազմվում է մինչ հարցազրույցի փուլը, սակայն հետագայում հնարավոր է տվյալ թեկնածուն հարցազրույցին չներկայանա, ինչը բազմաթիվ անգամներ արձանագրվել է որակավորման քննության ընթացքում: Ստացվում է, որ նաև ԿԿՀ-ի կողմից գործընթացին հատկացվում է ժամանակ ու ռեսուրսներ և մշակվում եզրակացություն յուրաքանչյուր դիմորդի համար որը, սակայն, հետագայում դիմորդի կողմից մրցույթին չներկայանալու պատճառով չի օգտագործվում:

Մրցույթի յուրաքանչյուր օր Հանձնաժողովի քարտուղարությունը նախ տեղեկացրել է արդյոք իրավազոր է նիստը, թե ոչ՝ նշելով Հանձնաժողովի մասնակից անդամներին: Նշվել է նաև նիստին դիտորդի կարգավիճակով մասնակից հասարակական կազմակերպության մասին:

Դրանից հետո հերթականությամբ մրցույթի դահլիճ են հրավիրվել այդ օրը հրավիրված դիմորդները:

Յուրաքանչյուր դիմորդի հետ ստուգումը սկսելուց առաջ հանձնաժողովի նախագահը նշել և ներկայացրել է դիմորդի կողմից ներկայացված պահանջվող փաստաթղթերը։ Այն է՝

- Դիմում որակավորման հանձնաժողովի նախագահի անունով,
- Անձը հաստատող փաստաթուղթ,
- Հավակնորդի բարձրագույն իրավաբանական կրթության առկայությունը հավաստող փաստաթուղթ,
- Հավակնորդի կենսագրական տվյալները պարունակող քարտ՝ իր կողմից իրավաբանի կոչում ձեռք բերելուց հետո իրականացրած մասնագիտական իրավաբանական գործունեության նկարագրությամբ,
- Պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելու կամ օրենքով նախատեսված կարգով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված լինելը կամ տարկետում ունենալը հավաստող փաստաթուղթ,
- Դատախազի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին կառավարության սահմանած կարգով տրված փաստաթուղթ,
- Իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճանի առկայությունը հավաստող փաստաթուղթ,
- «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկ։

Ըստ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի հայտատուն իրավունք ունի ներկայացնել նաև երաշխավորագրեր։

Դիտարկված 47 դեպքով երաշխավորագիր հայտատու դիմորդները ներկայացրել են երկու անգամ՝ համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատության դասախոսների կողմից։

Մեկ դեպքում քննարկման առարկա է դարձել դիմորդի կողմից առողջական վիճակի վերաբերյալ ներկայացված փաստաթղթերը, քանի որ առկա է եղել սրտի ստուգման արդյունքների կապակցությամբ լրացուցիչ ճշգրտման կարիք։ Տեղում ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության և ստուգումների արդյունքների համադրության, ինչպես նաև դիմորդի տված բացատրության արդյունքում հարցը շտկվել է։

Յուրաքանչյուր թեկնածուի հետ մրցույթի ընթացքը բաղկացած է եղել երեք հիմնական մասերից՝

1. Կենսագրական տվյալների ներկայացում: Հանձնաժողովի նախագահի կողմից թեկնածուի և վերջինիս կենսագրական տվյալների ներկայացում, ինչից հետո հանձնաժողովի անդամները առկայության դեպքում հարցեր են ուղղել ներկայացված կենսագրական տվյալների առնչությամբ: Հարցերը հիմնականում վերաբերել են՝

- ✓ Կրթության վերաբերյալ լրացուցիչ տվյալների պարզմանը,
- ✓ Աշխատանքային գործունեությանը, ինչպիսի հիմնական գործառույթներ է դիմորդը իրականացրել:

Բոլոր այն դեպքերում, երբ դիմորդները նախկինում աշխատել են ոչ քրեական մասնագիտացվածությամբ կամ առհասարակ չեն ունեցել իրավաբանի մասնագիտական փորձառություն, հանձնաժողովի կողմից պարտադիր հարց է հնչեցվել դատախազ դառնալու մոտիվացիայի և պատճառների վերաբերյալ:

Հարկ է նշել, որ դիտարկված 47 դիմորդների շուրջ կեսը աշխատանքային փորձառություն չի ունեցել: Առանձին դեպքերում արձանագրվել է, որ դիմորդները ունեն աշխատանքի փորձ, սակայն ոչ իրավաբանի: Օրինակ, աշխատել են որպես աուդիտոր, օծանելիքի խանութում վաճառող-խորհրդատու, ոստիկանության համակարգում քարտուղար, ֆինանսական հաշտարարի մասնագետ և այլն:

Նշված 47 դիմորդներից 7-ը նախկինում հանդիսացել են քննիչ: Որակավորման հանձնաժողովի կողմից դրական եզրակացություն այդ 7-ից ստացել է 2-ը և ներառվել դատախազների ցուցակում:

Դիտարկումը ցույց է տվել, որ բոլոր այն դեպքերում, երբ թեկնածուն մասնագիտական փորձառություն չի ունեցել, մասնագիտական ստուգման հարցերի պատասխանները բավարար խորքային չեն եղել:

Նույնիսկ այն բոլոր դեպքերում, երբ թեկնածուները հարցադրումներին տվել են բավարար պատասխաններ, դրանից հետո ավելի պրակտիկ քննարկում և որակումներ չեն կարողացել տալ: Օրինակ, թեկնածուն ներկայացրել է խարդախության կամ գողության ու կողոպուտի սահմանումները, սակայն թերացել է տալ դրա պրակտիկ նկարագրությունն ու դրսևորումները:

2. **Մրցույթի երկրորդ փուլում առանձին քննարկման առարկա է հանդիսացել թեկնածուի բարեվարքության ստուգումն ու արդյունքները**:

Հանձնաժողովի նախագահը այս փուլում հակիրճ ներկայացրել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրված բարեվարքության ստուգման եզրափակիչ մասը, ինչից հետո հանձնաժողովի անդամները հարցադրումներ են կատարել նաև այդ առնչությամբ։

Այստեղ հարկ է միանգամից նշել, որ Որակավորման հանձնաժողովի կողմից մանրամասն քննարկման առարկա է դարձել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրված բարեվարքության ստուգումն ու արձանագրված բոլոր հարցերը։ Հատկապես այն դեպքում, երբ թեկնածուն ստացել է բացասական կամ դրական վերապահումով եզրակացություն, ապա հարցերը եղել են առավել մանրամասն։

Կազմակերպության կողմից դիտարկված 47 թեկնածուներից 14-ը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ստացել է դրական վերապահումով, 25-ը՝ դրական, 8-ը՝ բացասական։

Որակավորման հանձնաժողովի կողմից ստացված տվյալների համաձայն վերջնարդյունքում դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված 12 թեկնածուից 5 թեկնածուի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը տվել է դրական, 6-ի վերաբերյալ՝ դրական վերապահումով և 1-ի վերաբերյալ՝ բացասական եզրակացություն։

Դրական վերապահումով եզրակացություն ստացած թեկնածուների գերակշիռ մասի պարագայում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից խնդրահարույց է դիտարկվել թեկնածուի կամ թեկնածուի ընտանիքի անդամների ֆինանսական դրության առնչությամբ անճշտությունները։ Օրինակ՝

- Ծնողների աշխատավարձերը ամբողջությամբ նշված չեն եղել, մինչդեռ թեկնածուն համատեղ բնակվել է վերջիններիս հետ և առկա է եղել նման օրենսդրական պահանջ,
- Թեկնածուն թերի է նշել իր ֆինանսական միջոցները, ստացված աշխատավարձը ամբողջությամբ չի նշել,
- Առկա են եղել կասկածներ հայտարարագրված գույքի ծագման աղբյուրի վերաբերյալ։

Որոշ դեպքերում դրական վերապահումով եզրակացություն տրվել է այն հիմքով, որ թեկնածուն աշխատանքային հարաբերություններում ենթարկվել է կարգապահական պատասխանատվության վարքագծի կանոնների խախտման հիմքով։

Բացասական եզրակացություն են ստացել այն դիմորդները, ում ֆինանսական դրության առնչությամբ վեր են հանվել առավել խնդրահարույց հարցեր, անճշտություններ և բացեր՝ անձամբ թեկնածուի կամ ընտանիքի անդամի առնչությամբ: Բացասական եզրակացություն ստացել են նաև այն թեկնածուները, ովքեր առհասարակ հայտարարագիր չեն լրացրել կամ ընտանիքի անդամները ընդհանրապես չեն հայտարարագրել ֆինանսական միջոցները, սակայն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը դուրս է բերել գույքային դրության վերաբերյալ տվյալներ:

Թերի լրացրած հայտարարագրերի առնչությամբ թեկնածուները մրցույթի ընթացքում ներկայացրել են տարբեր պատճառներ՝

- Չեն իմացել, որ ամբողջական տվյալներ պետք է նշել:
- Ծնողների աշխատավարձի չափը չեն իմացել, չեն էլ հարցրել:
- Իրենց իրական աշխատավարձի չափը չեն իմացել: Նման դեպքերում հանձնաժողովի անդամներից հարց է հնչել՝ արդյո՞ք հնարավոր չէր աշխատավարձի չափը ճշտել գործատուից կամ ստանալ հստակ պատկեր հարկային մարմնից, ինչին պատասխան հիմնականում նշել են, որ չէին մտածել այդ մասին:
- Համակարգը լավ չի աշխատել, հնարավոր չի եղել լրացնել:
- Չեն հասկացել՝ ինչ պետք է լրացվեր:

Այս և նմանատիպ դեպքերում հանձնաժողովի որոշ անդամների մոտ նկատվել է ձևավորված կարծիք այն մասին, որ թեկնածուները կամ լուրջ չեն վերաբերվել հայտարարագրմանն ու բարեվարքության ստուգմանը կամ չեն հասկացել՝ ինչպես լրացնել բարեվարքության թերթիկը:

Բարեվարքության ստուգման առնչությամբ հարկ է նշել, որ Որակավորման հանձնաժողովի նախագահի և անդամների կողմից դրսևորվել է բավականին լուրջ մոտեցում և հետևողականություն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից վեր հանված տվյալների և բարձրացված խնդիրների առնչությամբ: Կազմակերպության կողմից դիտարկված հարցազրույցների ընթացքում բարեվարքության բացասական գնահատական ստացած որևէ թեկնածու դրական եզրակացություն չի ստացել Որակավորման հանձնաժողովի կողմից նույնիսկ այն դեպքերում, երբ մասնագիտական պատասխանները բավարար են եղել ցուցակում ներառվելու համար: Դիտարկված հարցազրույցների ընթացքում Որակավորման հանձնաժողովի կողմից դրական եզրակացություն են ստացել ԿԿՀ-ի կողմից բարեվարքության դրական վերապահումով եզրակացություն ստացած երկու

թեկնածուներ, որոնց պարագայում վերապահումով գնահատման հիմք են հանդիսացել թեկնածուների ընտանիքի անդամների ֆինանսական միջոցների առնչությամբ անճշտությունները կամ հիմնավորված չլինելը: Բարեվարքության ստուգման և քննարկման փուլում հանձնաժողովի անդամները հարցեր են ուղղել նաև հետևյալ հանգամանքների վերաբերյալ՝

- Վարչական իրավախախտումներ և մասնավորապես ճանապարհատրանսպորտային խախտումների առկայություն

Այս առնչությամբ պետք է նշել, որ մեծ թիվ են կազմել թեկնածուները, ում առնչությամբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից բարձրացվել է վարչական իրավախախտումների առկայությունը, մասնավորապես՝ ճանապարհատրանսպորտային խախտումները: Սրանց մեջ մեծ թիվ են կազմել կարմիր գծերի, երկրորդ շարք կանգնելու հարցերը, որոնց առնչությամբ ցուցաբերվել է ավելի մեղմ մոտեցում, ի տարբերություն, օրինակ, արագության գերազանցման դեպքերի: Արձանագրվել են դեպքեր, երբ թեկնածուները չեն ներկայացրել այդ խախտումները, սակայն դրանք բարձրացվել են ԿԿՀ կողմից: Թեկնածուները այս առնչությամբ նշել են, որ չեն հիշում խախտումների մասին:

Մեկ դեպքով քննարկման առարկա է դարձել նախկինում քննիչ աշխատած թեկնածուի դեմ հարուցված կարգապահական վարույթներն ու իր մասնակցությամբ այլ դատական գործերը, որոնց մասին վերջինս շատ տեղեկություն չի ներկայացրել՝ նշելով, որ չի հիշում: Մեկ այլ դեպքով թեկնածուն քրեական գործով հանդիսացել է տուժող՝ հանդիսանալով ծեծկռտուքի մասնակից: Մեկ այլ դեպքով թեկնածուն, ով հանդիսացել է աուդիտոր, ներգրավված է եղել դատական գործընթացում, քանի որ ստորագրել է ընկերության կողմից ներկայացված հայցադիմումի տակ և մասնակցել այդ դատական գործին, սակայն տեղյակ չի եղել, թե խոսքը ինչ գործի մասին է: Հանձնաժողովի անդամի հարցին, թե ինչու է ստորագրել փաստաթղթի ներքո, որից տեղեկությունն չի ունեցել, վերջինս նշել է, որ իր ընկերներն են կազմել հայցադիմումը, վստահել է նրանց: Նշված թեկնածուներից և որևէ մեկը չի ներառվել դատախազների թեկնածուների ցուցակում:

3. **Մասնագիտական պատրաստվածության ստուգում**: Մրցույթի վերջին փուլում ստուգվել է թեկնածուների մասնագիտական պատրաստվածությունը: Մասնագիտական գիտելիքները ստուգվել են հատուկ հարցաշարի հիման վրա, որը նախապես հասանելի է եղել դիմորդներին:

Այս փուլում թեկնածուներին տրվել է 6 մասնագիտական հարց՝ կամ հանձնաժողովի բոլոր անդամների կողմից կամ որոշ անդամների կողմից երկուական հարցի տեսքով։

Մրցույթի դիտարկման բոլոր օրերին արձանագրվել է, որ հանձնաժողովի բոլոր անդամների կողմից տրվել են հարցեր։ Բոլոր դեպքերում պարտադիր կերպով հարց հնչեցվել է հանձնաժողովի նախագահի կողմից։

Բոլոր հարցերը եղել են նախապես հրապարակված հարցաշարից։ Հիմնական հնչեցված հարցերից են՝

- Անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության հասկացություններն ու հիմնական տարբերությունները,
- Քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքները,
- Արտոնյալ սպանության տեսակները,
- Հանցակիցների տեսակները,
- Ավարտված և չավարտված հանցագործություններ,
- Օպերատիվ հետաքննության արդյունքները որպես ապացույց,
- Քրեական հետապնդում իրականացնելու ձևերը,
- Գողության և կողոպուտի հասկացությունները, հիմնական առանձնահատկությունները,
- Հափշտակության հասկացությունը,
- Համաձայնեցման վարույթը,
- Խափանման միջոցների տեսակները:

Ինչպես արդեն ներկայացվեց դիտարկված 47 դիմորդներից դրական եզրակացություն ստացել են միայն 7-ը, ինչը արդեն իսկ որոշակի պատկեր է վեր հանում դիմորդների մասնագիտական պատրաստվածության վերաբերյալ։

Նշված և նմանատիպ հարցերին մեծամասամբ տրվել են սխալ պատասխաններ, գերակշիռ դեպքերում առհասարակ լիարժեք պատասխան չի տրվել։

Արձանագրվել են դեպքեր, երբ դիմորդը տիրապետել է հարցի պատասխանին, տվել է օրենսգրքով նախատեսված սահմանումը, սակայն հետագա նկարագրության և պրակտիկ դրսևորումները քննարկելու հարցում թերացել է։ Նման օրինակներից է, երբ թեկնածուն հստակ ներկայացրել է հափշտակության կամ խարդախության հասկացությունը, սակայն չի կարողացել տալ պրակտիկ օրինակներ։

Հանձնաժողովի առանձին անդամների կողմից որպես հարց տրվել է նաև իրավիճակի նկարագրությունը, որին ակնկալվել է թեկնածուի կողմից որակումը և հանցակազմի

նկարագրությունը: Նման դեպքերը վերաբերել են անհրաժեշտ պաշտպանության ու ծայրահեղ անհրաժեշտության, ինքնիրավչության, լիազորությունների չարաշահման հանցակազմերի հիման վրա պրակտիկ իրավիճակներին, որոնց գերակշիռ դեպքերում թեկնածուները չեն կարողացել տալ ճիշտ պատասխաններ:

Հատկանշական է, որ մասնագիտական փորձ չունեցող թեկնածուները, ովքեր նույնիսկ կարողացել են տալ ճիշտ սահմանումներ, հետագայում առավել խորքային նկարագրություն կամ տվյալ հանցակազմի կամ իրավիճակի պրակտիկ նկարագրության հարցում թերացել են:

Բացի խիստ մասնագիտական հարցերից հանձնաժողովի կողմից հնչեցվել են հարցեր նաև հարցաշարով նախատեսված իրավունքի այլ ճյուղերից : Օրինակ՝

- Վարչական վարույթ և վարչարարություն,
- Սահմանադրական կարգի հիմունքների հասկացությունը,
- Քաղաքացիաիրավական գործարք,
- Բարձրագույն դատական խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակը և այլն:

Դիտարկված հարցազրույցներով միայն մեկ թեկնածու է կարողացել պատասխանել վարչարարությանը վերաբերող հարցին: Սահմանադրական կարգի հիմունքներին կամ Բարձրագույն դատական խորհրդին վերաբերող հարցերին թեկնածուներից և որևէ մեկը ճիշտ պատասխան չի տվել:

Հարցերը տալիս և պատասխանները լսելիս հանձնաժողովի անդամները երբեմն ցուցաբերել են մանկավարժին բնորոշ դրական մոտեցում՝ փորձելով հուշել, օժանդակել թեկնածուներին իրենց պատասխաններում:

Որպես ընդհանուր եզրահանգում կարելի է նշել, որ նույնիսկ դրական եզրակացություն ստացած թեկնածուները լրջագույն խնդիր են ունեցել վերլուծական մտքի և մասնագիտական խորքային պատասխաններ տալու հարցում: Բացի մասնագիտական թերի պատրաստվածությունը, նկատվել են մտքի գրագետ շարադրման և արտահայտվելու խնդիրներ: Նույնիսկ ճիշտ պատասխանները գրեթե բոլոր դեպքերում եղել են կցկտուր, երբեմն բացառապես անգիր հնչեցված տեքստի տեսքով: Պետք է արձանագրել, որ այս խնդիրը վերաբերելի է նաև ոլորտում որպես քննիչ աշխատած դիմորդներին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմորդների գրեթե կեսը հանդիսացել են նորավարտ երիտասարդներ, նման պատկերը խոսում է առավել խորքային

խնդիրների մասին, որը գալիս է բուհական կրթությունից և մասնագետներ պատրաստելու թերացումներից։

Դիտարկելով ինչպես մասնագիտական պատրաստվածության որակն ու մակարդակը, այնպես էլ մրցույթին թեկնածուների մեծ մասի ցուցաբերած մոտեցումները, տպավորություն է ստեղծվում, որ թեկնածուների մեծ մասը պատկերացում չի ունեցել դատախազության համակարգի և պահանջվող ինչպես մասնագիտական, այնպես էլ անձնային որակների մասին։

Հանձնաժողովի կողմից եզրակացության ընդունում

Մասնագիտական հարցերի պատասխանները գնահատվել են հետևյալ կերպ՝

- Ճիշտ
- Հիմնականում ճիշտ, մասնակի սխալ
- Սխալ

Դիտարկված բոլոր դեպքերում, երբ թեկնածուն առնվազն 4 հարցի տվել է ճիշտ պատասխան, ունենալով բարեվարքության ոչ բացասական գնահատական, Հանձնաժողովի կողմից ստացել է դրական եզրակացություն։ Սակայն հաշվի առնելով, որ հիմնականում գերակշիռ մասի կողմից տրվել են սխալ պատասխաններ, վերջնական որոշումը միաձայն եղել է բացասական։

Որոշման կայացման ընթացակարգը եղել է հետևյալ կերպ՝ հանձնաժողովի նախագահը խնդրել է նիստի քարտուղարին ներկայացնել հնչեցված ճիշտ-սխալ պատասխանները, ինչից հետո նախագահը առաջարկել է տալ կամ դրական, կամ բացասական եզրակացություն։ Թեև որոշումների օբյեկտիվության վրա ազդելու մտահոգություն չի արձանագրվել, սակայն անհրաժեշտ է փաստել, որ որոշումը ընդունվել է Հանձնաժողովի նախագահի կողմից արված՝ կոնկրետ թեկնածուին դրական կամ բացասական քվեարկելու կոնկրետ առաջարկի հիման վրա։ Մինչդեռ ավելի ընդունելի մոտեցում կլիներ, եթե նախագահը առաջարկեր քվեարկել՝ զերծ մնալով ի սկզբանե մատնանշելուց, թե ինչպիսի եզրակացություն է ակնկալվում և անձամբ քվեարկեր ամենավերջինը։

Փակ մրցույթի անցկացում

Դիտարկման ժամանակահատվածում արձանագրվել է երկու դեպք, երբ անց է կացվել փակ մրցույթ։ «Դատախազության մասին» օրենքի համաձայն՝

Դատախազների թեկնածությունների ցուցակում լրացումներ կատարելու համար գլխավոր դատախազի հանձնարարությամբ տարվա ընթացքում կարող է անցկացվել հավակնորդների փակ մրցույթ:

Նման մրցույթի ընթացքում կազմակերպության դիտորդը հնարավորություն չի ունեցել մասնակցել թեկնածուների հարցազրույցին, քանի որ այն փակ ոչ թափանցիկ գործընթաց է և օրենքը մշտադիտարկման հնարավորություն չի տալիս:

Կազմակերպչական խնդիրներ

Որպես մրցույթի կազմակերպման գործընթացի դիտարկում, պետք է արձանագրել, որ միջանցքը, որտեղ թեկնածուները սպասել են մրցութային դահլիճ իրենց հերթին մտնելու համար, համապատասխան կահավորում չի ունեցել, առկա չեն եղել աթոռներ նստելու համար: Առանձին օրերի միջանցքին հարակից սենյակներից աշխատակիցները մոտեցրել են աթոռներ, որպեսզի ցանկացողները նստեն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թեկնածուները խմբերով կանչվում են նույն օրը նույն ժամին կամ կարճ տարբերությամբ, նման պայմաններում սպասելը դառնում է հոգեբանորեն ճնշող և հոգնեցնող:

Եզրահանգումներ

- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ներկայացված բարեվարքության եզրակացությունները դիտարկված բոլոր դեպքերում մանրամասն քննարկման առարկա են դարձել Որակավորման հանձնաժողովի կողմից, իսկ տրված եզրակացությունները բացառությամբ վերը հիշատակված մեկ դեպքի (երբ թեկնածուն ներառվել է ցուցակում ունենալով բացասական եզրակացություն) հաշվի են առնվել վերջնական որոշում կայացնելիս:
- Մտահոգիչ է դատախազ դառնալու հայտ ներկայացրած թեկնածուների մասնագիտական և անձնային պատրաստվածությունը մրցույթին, ինչը վեր է հանում նաև առավել խորքային խնդիրներ: Մասնավորապես, խնդիրները կապված են թեկնածուների վերլուծական կարողությունների, խոսքի ու մտքի հստակ և հասկանալի կառուցման ու արտահայտման և փաստարկելու ունակությունների բացակայության հետ:
- Նմանապես, թեկնածուների գերակշիռ մասը, լինելով առավել երիտասարդ տարիքի, կամ ընդհանրապես աշխատանքային փորձ չի ունեցել կամ ունեցել է

կարճ աշխատանքային փորձ կամ ոչ մասնագիտական, ինչի պայմաններում թեկնածուների մասնագիտական պատրաստվածությունը դատախազի պաշտոնում աշխատելու համար ցածր է եղել։

- Որպես խնդիր է դիտարկվել նաև նախապես հայտ ներկայացրած, սակայն հետագայում մրցույթի հարցազրույցին չներկայացած թեկնածուների քանակը՝ պայմանավորված նրանով, որ հայտ ներկայացրած բոլոր թեկնածուների առնչությամբ ԿԿՀ կողմից ներկայացվել են բարեվարքության վերաբերյալ եզրակացություններ, իսկ Որակավորման հանձնաժողովը իրականացրել է հարցազրույցի կազմակերպչական աշխատանքներ։ Նման պատկերը վեր է հանում որակավորման մրցույթի կազմակերպման փոփոխությունների անհրաժեշտություն։

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Վերանայել դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելուն հավակնող անձանցից պահանջվող փաստաթղթերի շարքը և նախատեսել հայտին կից պետական տուրքի մինիմալ չափով վճարման մասին ապացույց։ Նման պահանջի նպատակն է հայտատուների մեջ ունենալ այնպիսի պոտենցիալ թեկնածուներ, ովքեր հետևողական կգտնվեն հայտի ներկայացման ու մրցույթին մասնակցության հարցում։
- Վերանայել որակավորման մրցույթի կազմակերպման ընթացքն ու պահանջները և նախատեսել նոր ընթացակարգ։ Վերջինս նախատեսել երկու փուլով՝ գրավոր և բանավոր։

  Գրավոր փուլում իրավիճակային խնդրի հիման վրա գնահատել դիմորդի մասնագիտական պատրաստվածությունը, վերլուծական միտքը, մտքերը գրագետ շարադրելու կարողությունը։ Գրավոր փուլը հաղթահարած թեկնածուներին հրավիրել բանավոր փուլի։ Վերջինիս նպատակը պետք է լինի ծանոթանալ թեկնածուի հաղորդակցության, մտքերի բանավոր և համոզիչ արտահայտելու հմտություններին, անձնային որակները ճանաչելուն, բարեվարքության ստուգման արդյունքների քննարկմանը և այլն։
- Օրենքով սահմանել, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից բարեվարքություն ստուգում անցնում են այն թեկնածուները, ովքեր հաղթահարել են մրցույթի գրավոր փուլը և կմասնակցեն բանավոր փուլին։

- Վերանայել դատախազների թեկնածուներին ներկայացվող օրենսդրական պահանջները՝
    - Դատախազ դառնալու նվազագույն տարիք սահմանել 24 տարեկանը,
    - Որպես պարտադիր պահանջ նախատեսել առնվազն երկու տարվա իրավաբանի մասնագիտական փորձառության առկայությունը։
- Ցուցաբերել հետևողականություն թեկնածուների առնչությամբ տրված բարեվարքության եզրակացությունների նկատմամբ և ընդհանրապես բացառել բացասական եզրակացությամբ թեկնածուների ներառումը դատախազների թեկնածությունների ցուցակում։
- Օրենքով սահմանել Որակավորման հանձնաժողովի կողմից դատախազների թեկնածությունների ցուցակը սահմանելիս յուրաքանչյուր թեկնածուի առնչությամբ պատճառաբանված որոշման կայացման պարտավորություն, ինչը կապահովի հատկապես բարեվարքության բացասական կամ դրական վերապահումով եզրակացություն ստացած թեկնածուներին ցուցակում ներառելու վերաբերյալ հանձնաժողովի որոշման հիմնավորվածությունը։
- Վերացնել օրենքով սահմանված փակ մրցույթը և ներքին առաջխաղացումները նույնպես իրականացնել բաց ընթացակարգով։
- Մրցույթը կազմակերպելիս ուշադրություն դարձնել դրա կազմակերպման տեխնիկական կողմին՝ ապահովելով պատշաճ պայմաններ թեկնածուների մասնակցության համար։ Միաժամանակ, թեկնածուներին բանավոր փուլին հրավիրել այնպիսի ողջամիտ հերթականությամբ, որի պայմաններում կբացառվի հարցազրույցին 1 ժամից ավելի սպասելու պրակտիկան։